## Հայոց լեզվի և գրականության ուսուցիչների քննության թեստի գնահատման սխեմա

### I. Հայոց լեզու

**1.** ա) Այս նախադասության մեջ ***«մարտակարգ»*** բառը սխալ է գործածված, պետք է լինի ***«մարտակառք»:*** ---*1մ.*
բ) Իմաստով տարբեր, ձևով նման բառերը կոչվում են հարանուններ: Այս բառերը հարանուններ են և չպետք է դրանք շփոթել նույնագիր ու նույնահունչ բառերի հետ: ----------*1մ.*

**2.** ա) Այս նախադասության մեջ ***«վերադարցան»*** բառը սխալ է գրված, պետք է լինի ***«վերադարձան»:*** --------*1մ.*
բ) Մի շարք արմատներում և դրանցից կազմված որոշ բառերում ***ր***-ից հետո լսվող **ց** հնչյունը գրվում է **«ձ»** տառով: ----------*1մ.*

**3.** ա) Պետք է լինի ***«այգու»:*** ----------*1մ.*
բ) Բառերը, որոնք վերջավորվում են **ի** ձայնավորով, պատկանում են **ու** հոլովմանը: ----------*1մ.*

**4.** ա) Պետք է լինի ***«երգե՛ք»:*** ----------*1մ.*
բ) «Ե» խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի հոգնակի թիվը կազմվում է բայահիմքին ավելացնելով **«եք»** վերջավորությունը: ----------*1մ.*

**5.** ա) Պետք է լինի ***«ըստ որի»:*** ----------*1մ.*
բ) «Ըստ» նախադրությունը սեռական-տրականաձև անորոշ առմամբ կապվող բառ է պահանջում: ------*1մ.*

**6.** ա) Պետք է լինի ***«որպեսզի»:*** ----------*1մ.*
բ) Ի տարբերություն **որպեսզի**-ի, **որ** շաղկապով չի կարող սկսվել նպատակի պարագա երկրորդական նախադասությունը, եթե այն առաջադաս է կամ միջադաս դիրքում հաջորդում է ենթակային կամ խնդրին: ----------*1մ.*

**7.** ա) *«Այդ հսկա քաղաքը՝ մարդաշատ և աղմկոտ, ապրելու տեղ չէ»:* ----------*1մ.*
բ) Երբ հետադաս որոշիչը ծավալուն է կամ բազմակի, ապա իր որոշյալից տրոհվում է բութով, իսկ նախադասության այլ անդամներից՝ ստորակետով: ----------*1մ.*

**8.I.** ա) Կազմված է առնվազն երկու հարց: ----------*2մ.*
բ) Կազմված է միայն մեկ հարց: ----------*1մ.*
**II.** ա) Կազմված է առնվազն երկու հարց: ----------*2մ.*
բ) Կազմված է միայն մեկ հարց: ----------*1մ.*

**9.I.** ա) Գլխավոր ասելիքը որոշված է: ----------*2մ.*
բ) Գլխավոր ասելիքը մասամբ է որոշված: ----------*1մ.*
**II.** ա) Ձևակերպված է երկու փաստարկ: ----------*2մ.*
բ) Ձևակերպված է միայն մեկ փաստարկ: ----------*1մ.*
գ) Ձևակերպված փաստարկը անհամապատասխան է: ----------*0մ.*
**III.** ա) Դատողությունը փաստարկված է: ----------*2մ.*
բ) Դատողությունը մասամբ է փաստարկված: ----------*1մ.*
գ) Դատողությունը փաստարկված չէ: ----------*0մ.*
**Ոչ մի քերականական և/կամ ոճաբանական սխալ թույլ տրված չէ:** ----------*1մ.*
**Թույլ է տրված քերականական և/կամ ոճաբանական սխալ:** ----------*0մ.*

**10.I.** ա) Ըստ **I չափանիշի** ուսուցիչը ճիշտ է գրել միավորը և բերել է համապատասխան օրինակ: ----------*2մ.*
բ) Ըստ **I չափանիշի** ուսուցիչը ճիշտ է գրել միավորը, սակայն չի բերել համապատասխան օրինակ կամ սխալ է գրել միավորը, թեև բերել է համապատասխան օրինակ: ----------*1մ.*
գ) Ուսուցիչը սխալ է գրել միավորը կամ արտագրել է միայն **I չափանիշի** հրահանգները: ----------*0մ.*
**II.** ա) Ըստ **II չափանիշի** ուսուցիչը ճիշտ է գրել միավորը և բերել է համապատասխան օրինակ: ----------*2մ.*

բ) Ըստ **II չափանիշի** ուսուցիչը ճիշտ է գրել միավորը, սակայն չի բերել համապատասխան օրինակ կամ սխալ է գրել միավորը, թեև բերել է համապատասխան օրինակ: ----------*1մ.*

գ) Ըստ **II չափանիշի** ուսուցիչը սխալ է գրել միավորը և չի բերել համապատասխան օրինակ: ----------*0մ.*

**III.1.** ա) Ըստ **III չափանիշի** ուսուցիչը դուրս է գրել **3** սխալ և ճիշտ է գրել միավորը: ----------*3մ.*

բ) Ըստ **III չափանիշի** ուսուցիչը ճիշտ է դուրս գրել **2** սխալ և գրել է համապատասխան միավորը կամ ճիշտ է դուրս գրել 3 սխալ, բայց սխալ է գրել կամ ընդհանրապես չի գրել միավորը: ----------*2մ.*

գ) Ըստ **III չափանիշի** ուսուցիչը ճիշտ է դուրս գրել **1** սխալ և գրել է համապատասխան միավորը կամ ճիշտ է դուրս գրել 2 սխալ, բայց սխալ է գրել կամ ընդհանրապես չի գրել միավորը: ----------*1մ.*

դ) Ըստ **III չափանիշի** ուսուցիչը ճիշտ չի դուրս գրել աշակերտի սխալները և ընդհանրապես չի գրել կամ սխալ է գրել միավորը: ----------*0մ.*

**2.** ա) Ուսուցիչը ճիշտ է գտել 3 սխալ և որոշել է դրանց քերականական կարգերը: ----------*3մ.*

բ) Ուսուցիչը ճիշտ է գտել 2 սխալ և որոշել է դրանց քերականական կարգերը: ----------*2մ.*

գ) Ուսուցիչը ճիշտ է գտել 1 սխալ և որոշել է դրա քերականական կարգը: ----------*1մ.*

դ) Ուսուցիչը ոչ մի սխալ չի գտել և հետևաբար չի որոշել քերականական կարգը: ----------*0մ.*

## II. Հայ գրականություն

**11.** բ) ----------1մ. **12.** բ) ----------1մ. **13.** բ) ----------1մ. **14.** բ) ----------1մ. **15.** գ) ----------1մ.
**16.** ա) ----------1մ. **17.** գ) ----------1մ. **18.** բ) ----------1մ. **19.** բ) ----------1մ. **20.** բ) ----------1մ.
**21.** դ) ----------1մ. **22.** գ) ----------1մ. **23.** գ) ----------1մ. **24.** բ) ----------1մ. **25.** դ) ----------1մ.
**26.** ա) ----------1մ. **27.** գ) ----------1մ. **28.** բ) ----------1մ. **29.** գ) ----------1մ. **30.** գ) ----------1մ.

## III. Գեղարվեստական տեքստի ըմբռնում

**31.** դ) ----------1մ. **32.** բ) ----------1մ. **33.** ա) ----------1մ. **34.** ա) ----------1մ. **35.** բ) ----------1մ.
**36.** ա) ----------1մ. **37.** դ) ----------1մ. **38.** դ) ----------1մ. **39.** բ) ----------1մ. **40.** դ) ----------1մ.

## 41 - րդ առաջադրանքի գնահատման չափանիշներ

| |
|---|
| Առաջադրանքի առավելագույն միավորը **5** է:<br>Եթե տեքստն անհասկանալի է, թույլ է տրված մեկից ավելի փաստացի սխալ կամ պատասխանը 50 բառից պակաս է, այն չի ստուգվի և կգրվի **0** միավոր: |

### I չափանիշ

| *N* | *Դատողության հիմնավորում* | *Միավորներ* |
|---|---|---|
| **1.** | Աշխատանքում հստակ ներկայացված է տեքստի գլխավոր ասելիքը, ***երևում է*** ինքնուրույն մտածողության ունակությունը, դատողությունը փաստարկված է, և փաստարկները ***հիմնավորված են*** համապատասխան օրինակներով: | **3** |
| **2.** | Աշխատանքում ձևակերպված է տեքստի գլխավոր ասելիքը, դատողությունը ***հիմնականում*** փաստարկված է, թեև ***առանձին*** դեպքերում փաստարկները **հիմնավորված չեն** և/կամ բերված օրինակներն ***անհամապատասխան են:*** | **2** |
| **3.** | Աշխատանքում ձևակերպված է տեքստի գլխավոր ասելիքը, դատողությունը ***ընդհանուր առմամբ*** է ներկայացված, շատ դեպքերում փաստարկները ***համոզիչ չեն:*** | **1** |
| **4.** | Աշխատանքը չի համապատասխանում առաջադրանքի պահանջին, ձևակերպված չէ տեքստի գլխավոր ասելիքը և/կամ դատողությունը փաստարկված չէ: | **0** |

### II չափանիշ

| *N* | **Ուղղագրություն, ձևաբանություն, շարահյուսություն, կետադրություն** | *Միավորներ* |
|---|---|---|
| **1.** | Այս կարգի սխալների թիվը ***երեքից*** ավելի չէ: | **2** |
| **2.** | Այս կարգի սխալների թիվը ***վեցից*** ավելի չէ: | **1** |
| **3.** | Այս կարգի սխալների թիվը ***վեցից*** ավելի է: | **0** |